«ԱՐԹԼԱԲ» ՍՊԸ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Արտադրանքի սերտիֆիկացման մարմնում (այսուհետ՝ ՍՄ) հաստատված է ARTL-004 Բողոքներ ընթացակարգը, որով սահմանվում է արտադրանքի համապատասխանության գնահատման գործընթացում սերտիֆիկացման մարմնի և հայտատուի միջև առաջացած տարաձայնությունների քննարկման կարգը:

Գանգատը կարող է ՍՄ ներկայացվել գրավոր՝ փոստով, էլեկտրոնային փոստով կամ առձեռն: Գանգատին կարող են կցվել գանգատը հիմնավորող փաստաթղթերը կամ դրանց պատճենները:

Գանգատը ստանալուց հետո ՍՄ-ն հաստատում է, թե արդյոք գանգատը առնչվում է համապատասխանության գնահատման գործընթացին, որի համար ինքը պատասխանատու է, և եթե այո, ապա այն քննարկվում է:

ՍՄ-ի ղեկավարն իրավունք ունի մերժել այն գանգատը, որն ըստ էության չի համապատասխանում իրականությանը: Մերժումը կատարվում է գրավոր՝ մերժման պատճառի հիմնավորմամբ:

Գանգատի քննարկումն իրականացվում է ՍՄ-ի փորձագետների կողմից՝ ըստ գանգատի առարկայի:

ՍՄ-ի ղեկավարը բանավոր հանձնարարությամբ նշանակում է պատասխանատու անձի՝ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, գանգատի իսկությունը ստուգելու, այն գնահատելու և հետագա գործողությունների համար առաջարկներ մշակելու համար:

Գանգատի քննարկմանը չեն մասնակցում գանգատի առարկայի հետ առնչվող անձինք:

ՍՄ-ն պատասխանատու է անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը (որքանով հնարավոր է) հավաքելու և համադրելու համար՝ գանգատի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

Գանգատի վերաբերյալ վերջնական որոշումը պետք է կայացվի ՍՄ-ի կողմից այն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Գանգատի քննարկման արդյունքը խնդրի լուծումն է կամ պատճառաբանված մերժումը:

«ԱՐԹԼԱԲ» ՍՊԸ տնօրեն Հ. Հարտիրոսյան

Արտադրանքի սերտիֆիկացման ղեկավար Ս. Դալլաքյան

23.10.2025թ.